

Գ. ՍՕԼՕՎԵԱՆ

# ԾՈՒՂՐՈՒՂՈՒՒ...

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ



891.095
U-66

Թ Ի Գ Լ Ի Ս

Տպարան «ՊՐՕԳՐԷՍՍ» | Типография «ПРОГРЕССЪ»

Михайловскій пр. № 102.

1909








0 1 AUG 2013

12842

# Ծ Ո Ւ Ղ Ր Ո Ւ Ղ Ո Ւ

(Մանկական պատկեր)



Երբ տւին շոգենաւի վերջին սուլոցը, Սաթենիկը նորից վեր թուաւ նստած տեղից:

— Այժմ գնում ենք, հայրիկ:

— Այո, գնում ենք:

— Հուռա՛, գնում ենք...

Եւ Սաթենիկը ծիծաղում էր ու թռչկոտում: Ըստ երևոյթին նա շատ ուրախ էր:

Հայրը գիտում էր աղջկայ իւրաքանչիւր շարժումները:

— Այլեւ երկաթուղով չենք գնայ, հայրիկ:

— Ի՞նչ է, երկաթուղուց ճանձրացա՛ր:

— Օ, ես չըսիրեցի երկաթուղին: Այստեղ լաւ է... Տես, տես, հայրիկ, այն կինը ափից թաշկինակով է շար-



ժում... Ինչո՛ւ:



5174-55



- Բարի ճանապարհ է մաղթում:
- Ո՛ւմ:
- Իր ծանօթներին:
- Նա էլ է նոյնը անում... այ, այն մարդը:
- Ձգոյշ, չընկնես:



- Մի բռնի, չեմ ընկնի, պատիկ չեմ: Բայց, հայրիկ, տատիկին շուտով կրասնենմ:
- Սաթենիկը իջաւ նստարանից: Շոգենաւը ափից բաւականին հեռացաւ:
- Նրանք գնում էին Վօլգա գետի վրայով:

- Հայրիկ, շատ պիտի գնանք:
- Այո, շատ:
- Այս գիշեր կը հասնենք:
- Այս գիշեր այստեղ կը քնենք:
- Շոգենաւի՛ վրայ:
- Շոգենաւի վրայ:
- Իսկ վաղը կը հասնենք:
- Չէ:
- Ուրեմն, վաղն էլ կերթանք:
- Վաղն էլ այսպէս:
- Իսկ միւս ծրը:
- Նոյնպէս:
- Մինչ երբ:
- Դեռ շատ. չորս օր:
- Չորս օր. դա որքան է:
- Այ այս գիշեր կը քնենք, էլի այդպէս կերթանք, յետոյ երբորդ գիշերը կը քնենք:
- Յետոյ էլի կերթանք, չէ,— ընդհատեց Սաթենիկը:
- Այո: Այդպէս առաւօտը կը նստենք թէյի, այդ կը լինի չորրորդ օրը, գիշերը կը գանք տատիկին:
- Օ, ինչպէս շատ է, հայրիկ:
- Չանձրացա՛ր:
- Ո՛հ, ո՛չ, հայրիկ: Ես շատ ձանձրացայ մեր տանից, մեր մեծ-մեծ սանդուխքներից... օֆ, չեմ սիրում. ամեն անգամ բարձրանալուց պիտի կանգնես մի քանի անգամ: Սաթենիկը նստեց: Նա ընկաւ մի ինչ որ մտածման մէջ:
- Առաջին անգամ նա տեսնում է նոր տեսարաններ, երևոյթներ, նոր երկինք և որքան շուր...  
— Հայրիկ, մայրիկը և Գրիգորիկը այժմ հասած կը լինեն:
- Այո, նրանք արդէն տատիկի մօտ են:
- Այդ ի՞նչ բան է,— յանկարծ բացականչեց Սաթենիկը:— Այդ շոգենաւը քաշում է իրանից մեծ նաւի՛ն:



—Այո:

Պաթենիկը չէր հանգստանում:

—Հայրիկ, այ այնտեղ մի ուրիշը քաշում է երկու նաւ: Դեռ կարող է էլի քաշել:

—Կարող է:

—Իսկ երեք նաւ կըքաշէ:

—Երեք էլ կըքաշէ:

—Իսկ, հայրիկ, չորս նաւ:

—Չորսն էլ կարող է:

Սաթենիկը անցաւ շոգենաւի միւս կողմը: Նա շարունակ նորութիւններ էր նկատում:

Այս ամառայ ճանապարհորդութիւնը Սաթենիկի համար շատ անսպասելի եղաւ: Նա վեց տարեկան է, բայց առաջին անգամն է ճանապարհորդում: Նրա հայրը իր պաշտօնատեղից՝ Պետերբուրգից արձակուրդ առնելով՝ գընում է իր հայրենի քաղաքը ազգականների տեսութեան:

Սաթենիկը յիշեց տատին, շատ ուրախացաւ: Նրա կարծիքով տատն էր պատճառը, որ այդպիսի ուրախ ճանապարհորդութեան էր արժանացել ինքը:

\* \* \*

Օրը հրաշալի է. քամին շատ թեթեւ և դիւրալի. երկինքը պարզ, կապոյտ, շատ կապոյտ...

—Հայրիկ, ինչու, այստեղ երկինքը այդքան պարզ և կապոյտ է: Մեր քաղաքում նա այդպէս լայն չէ, միշտ էլ գորշ է... Չեմ սիրում գորշ երկինք...

—Մենք գնում ենք դէպի աւելի տաք երկիր, այդ է պատճառը, որ երկինքը, այդպէս կապոյտ ու ջինջ է այստեղ:

—Իսկ ինչո՞ւ այդքան լայն:

—Այստեղ բաց տարածութիւն է, մեծ-մեծ և բարձր տները քո աչքը չեն կտրում:

—Ինչո՞ւ են մեզնում բարձր տներ շինում: Ես չեմ սիրում բարձր տներ: Ա՛յ, այստեղ ինչպէս լաւ է: Այնտեղ, այնտեղ, հայրիկ, տես, ջրի միջում այդ ի՞նչ բան է, ծա-

ւեր... Այդպիսի բան չըկար մինչև հիմա: Ջրի մէջ ծաւեր, —միթէ լինում է, հայրիկ:

—Այնտեղ հող կայ... իսկ ծառերն էլ այդ հողի վրայ են բուսնում:

—Հո՞ղ ջրի մէջ:

—Այո, լինում է: Ուշադրութիւն դարձրու, այդ հողի չորս կողմը ջուր է, տեսնում ես:

—Այո, այո, հայրիկ. այն կողմից ահա մի փոքրիկ նաւակ է անցնում: Մեր շոգենաւը այն կողմից կարող է անցնել:

—Ինչո՞ւ չէ:

—Կարող է:

—Ի հարկէ, չէ՞ որ այնտեղ էլ ջուր է:

—Բայց ի՞նչպէս է այդ հողը գետի մէջ տեղ ընկել: Ափից է պոկ եկել:

—Ո՛չ, ջրի տակից հունն է բարձրացել:

—Հունը ի՞նչ է, հայրիկ:

—Ջրի տակը հո՞ղ է, չէ:

Սաթենիկը մտածեց:

—Այո, այդ գետի տակը հող է, այ, այնպէս, ինչպէս ափը: Այդ գետի տակին ասում են՝ հուն: Այդ հունը երբեք բարձրանում է, ջրի երես է դուրս գալիս: Յետոյ գետն էլ բերում է զանազան մնացորդներ՝ աւազ, փայտի կտորներ... այդպէս հաւաքւում և գետի մէջ տեղում գոյանում է հողի մի այնպիսի կոյտ, որին ասում են կղզի:

—Ի՞նչպէս ասացիր, հայրիկ... կը...

—Կղզի:

—Կը... կը... կղզի... Ուրեմն սա է՞լ կղզի է...

—Այո:

—Ա՛յ, մենք մօտեցանք... Հայրիկ, իսկապէս հող է. ծառերն էլ ինչպէս շատ են: Մեր պարտէզներում այդպէս չէ:

—Այո, այստեղ ծառերն աւելի շատ են, աւելի խիտ են:

—Այստեղ տներ չըկան, մարդիկ չեն ապրում:



—Ո՛չ, սա շատ փոքր կղզի է. կան աւելի մեծ կղզիներ. մեծ կղզիների վրայ ապրում են մարդիկ:

—Իսկ այդ ծառերը ո՞վ է տնկել, քանի որ մարդիկ չեն ապրում այստեղ:

—Ոչո՞ք:

—Այդպէս լինո՞ւմ է միթէ:

—Այո՛, ծառերի վրայից սերմերն ընկնում են գետնին ու բուսնում:

—Բայց մայրիկը ասում էր, որ պարտէզներում ծառերը տնկում են:

—Բայց սա պարտէզ չէ. դրան անտառ են ասում:

Այդպիսի անտառներից են ծառերը կտրում և բերում պարտէզում տնկում:

Կղզու մօտից շոգենաւն անցաւ: Ծառերի գովաստեն հովը շոյեց Սաթենիկի երեսը:

Մի նոր զգացմունք տիրեց նրա սրտին: Սաթենիկը մոռացաւ քաղաքը, զբօսատեղի պարտէզը, իրանց տան սանդուխքը, սենեակի մռայլ պատերը, խաղալիք-տիկիները: Բնութիւնը նրան ամբողջապէս կլանել էր: Յանկարծ նա նստեց և ընկաւ խոր մտածման մէջ:

—Ձուր, ջուր, երկինք... և որքան...

Նրա առաջ այժմ փուռեցին գետի ափերը, իսկ դրանց վրայ կամարած և երկինքը:

Մի ըրպէ նա մոռացաւ և՛ տատին, և՛ ամեն ինչ: Նրա մէջ մի նոր ցանկութիւն առաջ եկաւ: Սաթենիկը կամեցաւ անցնել-գնալ այնտեղ, շոգենաւից դուրս, հեռուն... Այնտեղ երկինքը այնպէս սիրուն իջնում է այն գեղեցիկ մարգագետնի վրայ:

Սաթենիկը չըզիմացաւ, դարձեալ ընդհատեց հօր յուրթիւնը:

—Հայրիկ, ես ուզում եմ այնտեղ գնալ:

—Ո՛ւր:

—Ա՛յ, այնտեղ, ուր երկինքը այդպէս սիրուն կպել է գետնին... և ինչպէս կտր է... Հայրիկ, նա հեռու չէ. եթէ ափ իջնենք, ես վազէվազ կը հասնեմ:

—Ձեա կարող, սիրելիս: Նա շատ հեռու է...

—Որտեղը... Դու այնտեղ չես նայում, հայրիկ: Ա՛յ այն կէտին եմ ասում... Այ, այնտեղ, ուղիղ, նայիր...

—Այն՝ ուր երկինքը կտրած ընկնում է, չէ:

—Այո՛, այո՛: Տեսնում ես...

Եւ Սաթենիկը բարձրացաւ նստած տեղից:

—Ձգո՛յ՛, ջուրը կընկնես...

—Ձէ, չէ, հայրիկ: Ա՛յ, շոգենաւը կըկանգնի, կըթողնես: Ես մի ըրպէում կըգնամ, կըգամ:

—Սիրելիս, նա քեզ այդպէս մօտ թւում է...

—Ձէ, հայրիկ, նա շատ մօտ է:

—Ընդհակառակը, նա շատ հեռու է: Յետոյ ի՞նչ ես կարծում, երկինքը այնտեղ ճիշտ կպած է երկրին:

—Ի հարկէ կպած է: Դու, հայրիկ, այնտեղ չես նայում: Մեր քաղաքում ես այդպիսի բան չեմ տեսել: Հայրիկ, ինչո՞ւ այստեղ չենք ապրում: Ես ամեն օր կըվազէի, այն գիծը կըբռնէի: Դու, հայրիկ, ինչո՞ւ ես ծիծաղում:

—Որովհետեւ երկինքի այն գիծը բռնել չես կարող:

—Ինչո՞ւ:

—Նա կպած չէ երկրին: Հէնց որ նրան մօտենաս, այդ գիծը կըհեռանայ, դու քո առաջ կտեսնես էլի նոր տարածութիւն:

—Վայ:

—Հապա՛:

—Ինչո՞ւ, հայրիկ:

Որովհետեւ երկինքը շատ մեծ է, նա ո՛չ մի տեղ կըկպած չէ երկրին, նա մեզ շրջապատում է ամեն կողմից: Դու այդ գիծը տեսնում ես միայն բաց տեղում, քաղաք գնաս՝ չես տեսնի...

—Ձէ, ես քաղաք չեմ գնայ: Հայրիկ մնանք այստեղ: Բայց ինչպէս սիրուն է այս գիծը: Հայրիկ այս կողմումն էլ կայ...

—Այո՛, քո ամեն կողմից կերևայ: Դարձիր այս կողմը, աես...



- Ճիշտ որ այստեղ էլ նոյնն է:
- Իսկ քո գլխի վերևը չե՞ս նայել:
- Ի՞նչ կայ, հայրիկ:
- Տես, իմացիր:
- Այստեղ էլ երկինք է:
- Գի՞ծ կա՞յ:

— Չէ: Այստեղ երկինքը շատ բարձր է... Չէ, ես այստեղ չեմ հասնի, բայց այն գծին կը հասնեմ:

Եւ Սաթենիկը աչքը չէր հեռացնում այդ գծից՝ հորիզոնից: Նրա համար ամբողջ աշխարհը մի հիասքանչ տեսարան էր ներկայացնում: Ուրախութեան նշոյլները ցուում էին և ընկնում նրա սրտի խորքերը: Եւ Սաթենիկի առջ բացւեց նոր աշխարհ: Նա այժմ միայն ըմբռնեց, որ իր հայրենի քաղաքից դուրս կայ մի մեծ տարածութիւն, անսահման երկինք և այդ բոլորը վեհանձն, հիասքանչ, անծայր...

\* \* \*

Ճանապարհորդութեան առաջին օրերը Սաթենիկի համար անցան շատ աննկատելի: Տպաւորութիւնները, չըտեսած նորութիւնները նրան ամբողջապէս կլանել էին:

Բայց այսօր նա նկատեց մի նոր բան: Սաթենիկը պատահմամբ ցած նայեց. այնտեղ շոգենաւի ստորին յարկում մարդիկ էին վիտտում: Սաթենիկը կամեցաւ գնալ այնտեղ:

Հայրը իջաւ շոգենաւի վերին յարկից դէպի ցած մի մեծ սանդուխքով:

Սաթենիկը շատ զարմացու. նրա առջ պատկերացաւ մի նոր աշխարհ:

Ասուած իմ, սրբան նորութիւններ, օտարոտի դէմքեր, աղմուկ, շշուկ: Սաթենիկը տեսաւ այստեղ մի խումբ մարդիկ, կանայք, երեխաներ, բայց դրանք նման չէին իր տեսած սովորական դէմքերին: Դրանց բոլորի շորերը պատառոտուն էին, ախտոտ, երեսները սևացած... Այնտեղ յատակն էլ կեղտոտ էր, օդն էլ չափազանց ծանր: Շոգենաւի խոհանոցից, մեքենաներից բուրում էր իւզի, նաւթի, կեղտի հոտ:

նաւի խոհանոցից, մեքենաներից բուրում էր իւզի, նաւթի, կեղտի հոտ:

Սաթենիկը շատ զգոյշ սկսեց քայլել:

— Հայրիկ, ինչպէս կեղտոտ է այստեղ:

Սա շոգենաւի հասարակ մասն է՝ աղքատների, չքաւորների համար:

Սաթենիկը զգաց մի նոր յուզմունք, նա խօսք չէր գտնում. առաջին անգամն էր նա պատահում այդպիսի կեխտ ու ժխորի:

— Գնանք, Սաթենիկ:

— Չէ, չէ, հայրիկ, ես ուզում եմ դիտեմ:

Հայրը նրան պատեցրեց:

Սաթենիկը տեսնում էր օտարոտի դէմքեր:

Նրա ուշադրութիւնը կենդրոնացաւ մի կնոջ վրայ:

— Այդ կինը, հայրիկ, ինչո՞ւ է յատակի վրայ նստել: Երեխային էլ ծիծ է տալիս... շորերը ինչպէս պատառոտած են, մազերը զգգգլած... Սաթենիկը մօտեցաւ հօրը՝ ամուր բռնեց նրա ձեռքից: Ձեռները դողդողացին, աչքերը ցած գցեց:

— Գնանք, Սաթենիկ:

— Այս մարդուն էլ տեսնեմք, հայրիկ. նա բոլորովին յատակի վրայ է պառկած: Չէ որ դու ասում էիր յատակի վրայ պառկելը վրաս է.

Հայրը լուրջ ուղղութիւն տաւ իր դիմագծերին.

— Ի՞նչ անեն խեղճերը, փող չունին, աղքատ են:

Նրանք անցան շոգենաւի միւս կողմը: Սաթենիկի ոտքերը շարունակ ընկնում էին կեղտի, ջրի, իւզոտած թոկերի մէջ:

— Կաց, հայրիկ, մաշիկներս կեղտոտեցին:

— Լաւ, կը գնանք, կը մաքրենք:

— Ու՛ֆ, հայրիկ, ոտքս ցաւեցրի. այդ ի՞նչ թոկ է, ոտքս դիպաւ... Իսկ այս ի՞նչ բան է:

— Շոգենաւի ծխնելոյզն է: Եկ, քեզ ցոյց տամ մեքենաները:



Հայրը բարձրացրեց Սաթենիկին և ցոյց տուա շոգե-  
նաւի ներսը, ուր մեքենաներն էին:

Դա մի խոր փոս էր, որի մէջ պողպատեայ անագին  
շերտերը, գլանները պտոյտներ էին գործում: Իսկ ներսից  
փչում էր մի անտանելի տաքութիւն:

— Հայրիկ, հայրիկ, այնտեղ մա՞րդիկ կան:

— Այո, դրանք մեքենավարներն են, սրանք են, որ  
հսկում են շոգենաւի ման գալուսն: Սրանք վառում են կը-  
րակը, եռացնում են ջուրը, շոգի պատրաստում, իսկ այդ  
շոգին շարժում է մեր այդ նաւը:

— Այո, այդ դու պատմել ես: Բայց այս մարդը ի՞նչ-  
պէս է դիմանում այդ կրակ-շոգին: Իմ երեսը այստեղ իսկ  
այրւեց:

Մեքենավարների իւզոտած արտաքինը նոյնպէս ա-  
ռաջ բերեց Սաթենիկի սրտում մի անսովոր վրդովմունք:

— Դու, հայրիկ, միշտ ասում էիր, որ խոհանոց չըզը-  
նամ, կըշոգեմ, կըմըսեմ... իսկ այս մարդիկ չէ՞ն շոգում,  
չէ՞ն մըսում...

Սաթենիկը կրկին յուզւեց: Այստեղ նա ամեն քայլա-  
փոխում տեսնում էր բոլորովին անսովոր կեանք, անսո-  
վոր դէմքեր: Այնտեղ շոգենաւի վերին յարկում յատակն  
էլ մաքուր է, ոտքերի տակ գցած են կարպետներ,  
տախտերն էլ փափուկ, մաքուր են, մարդիկ էլ լաւ են  
հագնւած, իսկ այստեղ...

— Մայրիկ, այս հացը չեմ կարողանում ուտել:

Սաթենիկը յետ նայեց: Մի փոքրիկ ոռւս աղջիկ էր  
խօսողը պատառոտուն շորերով, երեսը աղտոտ, թւերը  
բաց...

— Մայրիկ, այ, մեր դրացին թէյ է խմում, գնամ  
հացս թըջեմ նրա բաժակի մէջ:

— Նստիր տեղդ...

Եւ մայրը մի հարւած տուա աղջկայ գլխին:

Աղջիկը լռեց, նստեց տեղում և սկսեց կրծել շոր  
հացը: Սաթենիկը քիչ մնաց, որ ճչայ:

— Օ, ինչ անպիտան մայրիկ է. ինչո՞ւ է խփում...

Պարզ էր, որ Սաթենիկը չէր կարողանում իր հոգու  
վրդովմունքը գսպել: Նրա ձայնը նոյնիսկ երերում էր:

— Հայրիկ, գնամ մեր բուլկին բերեմ տամ այս աղ-  
ջրկան:

— Բեր... բայց կաց, գնանք միասին, ճանպան չես  
գտնի:

— Գնանք, հայրիկ, շուտով:

Նրանք նորից բարձրացան վերև:

Սաթենիկը շտապով վերցրեց բուլկին և մէկ խնձոր:  
Մի քանի բոպէից յետոյ նրանք կրկին ցածուսն էին:  
Սաթենիկը մօտեցաւ աղքատ աղջկան:

— Օրիորդ, կուզե՞ս այս բուլկին:

Խեղճ աղջիկը քաշւեց, նայեց մօրը և լուռ մնաց:

— Վերցրո՞ւ, — պատուիրեց մայրը, — շնորհակալութիւն  
յայտնիր աղայի աղջկան:

— Իմ անունը աղայի աղջիկ չէ, Սաթենիկ է... Գո  
տնունը ի՞նչպէս է:

— Վառեա՞...

— Վառեա, այս խնձորն էլ վերցրու:

Աղքատ աղջիկը ազահուլեամբ յարձակւեց հացի վը-  
րայ, սկսեց կրծել, իսկ խնձորը հոտոտեց...

Սաթենիկը դիտում էր խիստ զարմացած:

— Խնձորը կեր, — ասաց Սաթենիկը:

— Կուտեմ, կուտեմ, օրիորդ:

— Ասացի, անունս Սաթենիկ է:

— Շնորհակալ եմ ձեզից, — միջամտեց աղքատ աղջը-  
կայ մայրը:

— Դու ինչո՞ւ խփեցիր սրան. լաւ մայրիկ չես:

— Բա՞ ի՞նչ անեմ, երբ խօսքս չի լսում: Դու որ հայ-  
րիկիդ նեղացնես, նա քեզ չի՞ ծեծի, չի՞ խրատի...

— Իմ հայրիկը ինձ չի խփում: Ձէ, դու լաւ մայրիկ  
չես...

— Դէ, դու խելօք ես լինում, հայրիկդ էլ քեզ չի ծե-  
ծում: Նա այսօր առաւօտից դահլաս տանում է, ասում է



գնամ այն գրացու մօտ թէյ խմեմ՝ ասում եմ չէ, նա էլի  
իրանն է ասում...

— Ես թէյ էի ուզում:

— Դու այսօր թէյ չես խմել:

— Ձէ, երէկ էլ չեմ խմել, անցեալ օրն էլ չեմ խմել:

— Ինչո՞ւ:

— Այդպիսի հարց մի տար, — միջամտեց հայրը: — Ձեռն  
խմել, որովհետեւ չունենն, աղքատ են:

— Հայրիկ, ես մնամ այստեղ, Վառեայի հետ խաղամ...

— Ձէ, չէ, Սաթենիկ, գնանք, այս բոպէիս շոգենաւը  
կրկանգնէ, մենք կիջնենք քաղաք...

— Դու տիկնիկներ ունես:

— Ի՞նչ:

— Տիկնիկներ... Տիկնիկներ չըգիտե՞ս ինչ բան է:

— Ծուղրուղո՞ւ... ծուղրուղո՞ւ...

— Այ, — ճշաց Սաթենիկը, խիստ վախեցած նայելով  
դէպի այն կողմը, որտեղից գալիս էր աքաղաղի ձայնը:

Մի մեծ վանդակի մէջ աքաղաղը հպարտ կերպով  
հովանաւորում էր հաւերին և այն ժամանակ, երբ դարձ  
ձաւ յետ Սաթենիկը, աքաղաղը մի անգամ ևս կանչեց՝

— Ծուղրուղո՞ւ...

— Հայրիկ, վախենում եմ, այդ ի՞նչ բան է:

Սաթենիկը կուշ եկաւ և ամուր բռնեց հօր ձեռքը:

Աղքատ աղջիկը կուշտ ծիծաղեց:

— Վայ, մայրիկ, աղայի աղջիկը չըգիտէ ի՞նչ բան է  
աքաղաղը:

Սաթենիկը խիստ վիրաւորեց. նրան թւաց, որ Վա-  
ռեան ծաղրում է նրան:

— Ամօթ չէ՞ քեզ, ծիծաղում ես վրաս: Ես քեզ հաց,  
խնձոր տւի...

Աղքատ աղջիկը բարձր նկատեց.

— Ո՞վ է ծաղրում... Աքաղաղը ի՞նչ պիտի անէ քեզ,  
որ այդպէս վախում ես:

— Երևի օրիորդը աքաղաղ չի տեսել, — միջամտեց  
Վառեայի մայրը:

— Ես առաջին անգամն եմ տեսնում այդպիսի թռչուն:  
Այս ի՞նչ խոշոր և սարսափելի աչքեր ունի: Հայրիկ նա  
չի կծի...

— Ձէ, չէ, Սաթենիկ, մի վախենար...

— Եկ, մօտ գնանք, — ասաց աղքատ աղջիկը:

— Եւ Վառեան թռչկոտելով մօտեցաւ վանդակին:

— Մի գնա, մի գնա, — բացականչեց Սաթենիկը:

— Ծուղրուղո՞ւ...

— Դարձեա՛լ: Նա, հայրիկ, շարունակ ձայն է հանում.

— Այո, նա ուրախ է, կանչում է:

— Ծուղրուղո՞ւ...

— Կանչում է, ինչո՞ւ:

— Ի՞նչպէս թէ ինչու, — միջամտեց Վառեան. — նա միշտ  
կանչում է, մանաւանդ առաւօտները շուտով: Իսկ դը-  
րանք, այդ պատիկները, հաւեր են, չեն կանչում: Սրանք  
ձու են ածում...

Այդ միջոցին վանդակին մօտեցաւ խոհարարը, ձեռ-  
քը կոխեց նրա մէջ, հանեց մէկ հաւ, կտրեց գլուխը,  
շտապ տարաւ խոհանոց:

— Օյ, օյ, այդ ի՞նչ արաւ, հայրիկ... արիւն...

— Մորթեց, որ տապակէ, — պատասխանեց Վառեան. —  
դրանց այստեղ պահում են... Այ, այնտեղի, վերևի կար-  
գի ճանպորդները երբ պահանջում են, այդ խոհարարը  
այդպէս մորթում է սրանց և տապակում: Նա այսօր չոր-  
րորդ հաւն է մորթում:

— Հայրիկ, ես այլևս տապակած հաւ չեմ ուտի:

Աղքատ աղջիկը դարձեալ մի կուշտ ծիծաղեց:

— Ձէ, դու վատ աղջիկ ես, հէնց իմ վրայ ծիծաղում ես:

— Ծուղրուղո՞ւ... կանչեց աքաղաղը:

— Ծուղրուղո՞ւ, ծուղրուղո՞ւ, — ծաղրեց Սաթենիկը, —  
ի՞նչ ես շարունակ կանչում... վատ թռչուն... այ, քեզ  
պիտի մորթեն, այն խեղճ հաւին մորթեցին...



Եւ Սաթենիկը նորից մօտեցաւ հօրը:

— Գնանք, հայրիկ, վերև, ես չեմ ուզում տեսնել այդ անպիտան, ինչպէս ասացիր...

— Աքաղաղ, աքաղաղ, — կցեց աղքատ աղջիկը:

— Աքաղաղ... աքաղաղ... հը, աքաղաղ... քեզ մորթել է հարկաւոր...

Եւ Սաթենիկը սկսեց հեռանալ դէպի վերին յարկը:

— Կը գնն խաղալու, — հարցրեց Վստեան:

— Չէ, գու լաւ աղջիկ չես... Դու ինձ ծաղրում ես...

— Ծուղրուղո՞ւ... ծուղրուղո՞ւ...

Բայց Սաթենիկը այլևս շուռ չեկաւ: Նա շտապ բարձրացաւ վերև:



<< Ազգային գրադարան



NL0402553



Հոյս տեսած են մեր մանկական հետեւեայ պատմաւածքները:

1) «Կեանքի պահանջը», տպւած 1902 թ. «Աղբիւրի»  
№№ 9—12

2) «Բանւորի գիրքը», տպւած 1907 թ. «Աղբիւրի»  
№ 5—6-ում:

3) «Վարագոյրի ետեւում», տպւած 1908 թ. «Աղ-  
բիւրի» № 2—3-ում:

4) «Ծուղրուղի» 1909 թ. «Աղբիւրի» № 7—8-ում:

Առանձին գրքով հրատարակել կամեցողները կարող  
են գիմել հեղինակին՝ Тифлисъ, редакция «Агбюръ-  
Тараъ».